



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան



«27» 03 2024թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 034 - 24

**Ձեռնարկողը՝**

**«Փաուեր Էներջի» ՍՊԸ**  
Ք. Երևան, Արուսյան 22 Ա

**Գործունեությունը՝**

**Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական տարածքի 2/6 հողամասում «Փաուեր 2» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**  
Արմավիրի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 034 - 24

«27» Դեկտեմբեր 2024թ.


**Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական տարածքի 2/6 հողամասում «Փաուեր 2» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Նախաձեռնող՝	«Փաուեր Էներջի» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Բ»
Տեղադրման վայրը՝	Արմավիրի մարզի Բաղրամյան խոշորացված համայնքի Լեռնագոգ բնակավայր

**Ներածական մաս.** Ներկայացված շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով /այսուհետ՝ հայտ/ «Փաուեր Սոլար» ՍՊԸ կողմից նախատեսվում է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական տարածքի 2/6 հողամասում «Փաուեր 2» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-150-Ն, այսուհետ՝ օրենք/՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ ենթակետի՝ արևային կայանի կառուցումը, որպես նախատեսվող գործունեության տեսակ, դասակարգվում է Բ կատեգորիայի: Համաձայն օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները: Այսպիսով՝ փորձաքննական գործընթացն իրականացվել է 2014 թ. օրենքի դրույթներին համապատասխան:

**Նկարագրական մաս.** Գործունեությունն իրականացվելու է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թ. մայիսի 17-ի N155-Ա որոշման համաձայն, «ՓԱՈՒԵՐ ՍՈԼԱՐ» ՍՊ ընկերությանը տրամադրված 4800կՎտ հզորությամբ ԼԷ №0731 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիայի (մինչև 2045թ. մայիսի 18-ը գործողության ժամկետով), «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից 2023թ. նոյեմբերի 7-ին NS-35/0105-Հ տրամադրված տեխնիկական պայմանների, Բաղրամյան համայնքի ղեկավարի կողմից 2023 թ. հունիսի 30-ին տրամադրված N046 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 8.51596 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունն էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների և գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի:





Նախագծի իրականացման նպատակն է՝ ապահովել Հանրապետության էներգամատակարարման հեռանկարային պահանջարկը, պահպանել և բարելավել այլընտրանքային էլեկտրաէներգիայի արտադրությունը, էլեկտրաէներգիայի արտադրությունում ներդնել նոր՝ էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիա:

Համաձայն հայտի՝ նախատեսվող արևային կայանի տարածքը գտնվում է մարզկենտրոնից 25 կմ հյուսիս-արևմուտք, մոտակա բնակավայրերից՝ Դալարիկ բնակավայրից գտնվում է 1,98 կմ, իսկ Լեռնագոգ բնակավայրից՝ 3,14 կմ հեռավորության վրա, հանրապետական ավտոճանապարհից 2,2 կմ հեռավորության վրա:

Գործունեության տարածքը ծովի մակարդակից գտնվում է 1035 մ բարձրության վրա: Տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդներով և ձորակներով կտրտված լանդշաֆտը: Ուսումնասիրվող տարածքը կազմված է մի շարք միջին չորրորդական լավային հոսքերից:

Կլիման չոր, խիստ ցամաքային է: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 9-11° C-ի սահմաններում: Շոգ օրերը տևում են ավելի քան չորս ամիս՝ ուղեկցվելով չոր եղանակներով: Հուլիս և օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 25-30° C է, իսկ առավելագույնը՝ 41.5° C: Տարեկան տեղումները տատանվում են 250-350 մմ- ի սահմաններում: Ձմեռը չափավոր ցուրտ է, հունվարի միջին ջերմաստիճանը -4° C-ից-6° C է, նվազագույնը -28° C: Տարածքում քամու առավելագույն արագությունն ըստ «Շինարարական կլիմայաբանություն» նորմերի՝ 24 մ/վ է:

Հիդրոերկրաբանական տեսակետից՝ ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է մթնոլորտային տեղումների ներծծմամբ: Տվյալ տարածքում գրունտային ջրերը ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 10 մետրից խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են:

Համաձայն 2020թ. ապրիլի 20-ի ՀՀԸՆ նորմերի՝ տարածքը գտնվում է I սեյսմիկ գոտում 8-9 բալ սեյսմիկությամբ: Տեղամասի հաշվարկային սեյսմակայունությունն ըստ սպասվող առավելագույն արագացման գործակցի (g) արտահայտմամբ կկազմի 0.3g:

Համաձայն հայտի՝ գործունեության տարածքը համայնքի և բնակավայրի բնակիչների կողմից չի օգտագործվել ոչ գյուղատնտեսական նպատակներով, ոչ որպես արոտավայր:

Գործունեության ենթակա և հարակից տարածքներում բնության, պատմամշակութային հուշարձաններ չկան: Գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում ներառված բուսական և կենդանական տեսակները բացակայում են՝ պայմանավորված տարածքում բուսածածկի բացակայությամբ:

Համաձայն հայտի՝ նախատեսվող «Փաուեր 2» արևային կայանի տեխնիկական ցուցանիշներն են՝

- արևային կայանի ՖՎ վահանակների զբաղեցրած մակերեսը կազմում է 2,554 հա: Առավելագույն դրվածքային հզորությունն ըստ վահանակների կազմում է 5741 կՎԱ, իսկ արևակայանի առավելագույն հզորությունը 4800 կՎԱ է: Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 9984 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 575 Վտ առավելագույն հզորությամբ: 16 հատ՝ 330 կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխներով միանալու են ենթակայանի 0.8 կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին: Արևային էլեկտրակայանը տեղադրվելու է ցինկով գալանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 24°





թեքվածությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35 մ/վ քանու արագության համար:

Ենթակայանի կառուցման համար նախատեսվում է տեղադրել 6600ԿՎԱ հզորության, 35/0,8 կՎ լարման տրասֆորմատորային լրակազմ JUPITER-6000K-H1 տիպի:

Ենթակայանի 35 կՎ լարման կողմում նախատեսված է իրականացնել հաշվառք: Նոր կառուցվող ենթակայանը նախատեսվում է միացնել գոյություն ունեցող 35կՎ «Դալարիկ» օդային գծին:

JUPITER-6000K-H1 լրակազմը բաղկացած է երեք բաժիններից՝

- ցածր լարման բաժին, որում գտնվում են 0,8 կՎ վահանները,

- տրանսֆորմատորի բաժին, որում տեղադրված է 6600 կՎԱ հզորության, 35/0,8 կՎ լարման յուղային երկփաթույթ տրանսֆորմատոր,

- բարձր լարման բաժին, որում տեղադրված են 35կՎ անջատիչներ և 35 կՎ գերլարման սահմանափակիչներ:

Տրանսֆորմատորի բաժնի տակ նախատեսված է յուղընդունիչ՝ համաձայն ПУЭ-7 4.2.69 կետի պահանջների:

Ենթակայանի միացումը 35 կՎ օդային գծին իրականացվելու է կոնտեյներից, ելքն այլումինե հաղորդալարերով՝ АПБП 3x70 մմ<sup>2</sup> տիպի եռաջիղ մալուխով: Նախագծով նախատեսվում է մալուխային կոնստրուկցիայի տեղադրում: Եռաջիղ մալուխը մոնտաժվելու է ստորգետնյա տարբերակով մինչև «Դալարիկ» 35 կՎ օդային գծի հենարան:

Հողանցման արտաքին կոնտուրն իրականացվելու է 40x4 շերտապողպատով, որը տեղադրվելու է հողում 0,7 մ խորությամբ և ուղղահայաց էլեկտրոդներով 50x50x5 մմ՝ 2 մ երկարությամբ:

Կայծակի ուղիղ հարվածներից ենթակայանի պաշտպանությունն իրականացվելու է CB-105 տիպի ե/բ հենասյուների վրա տեղադրված շանթարգելներով:

Ըստ հայտի նախագծով նախատեսված է արտաքին լուսավորություն: Շանթապաշտպանության ե/բ հենասյան վրա ամրացվելու է 2 հատ 200Կտ հզորությամբ LED լուսարձակներ, որոնք սնվելու են 220 Վ լարման ցանցից:

Նախագծվող 35 կՎ մալուխագծի երկարությունը 310 մ է, որից 20 մ կոնստրուկցիայով, 290 մ խրամուղով:

Նախատեսվում է գոյություն ունեցող «Դալարիկ» 35 կՎ օդային գծի N22 АУ-35 «Սևան» տիպի հենարանից վերցնել ճյուղավորում, հենարանի վրա տեղադրել 35 կՎ գծային բաժանիչ և գերլարման սահմանափակիչներ, ապա արտաքին տեղադրման ջերմանստեցվող ծայրային կցորդիչով անցում կատարել մալուխագծի: Մալուխագիծը մոնտաժվելու է հենարանի երկայնքով, ապա խրամուղով մինչև նոր կառուցվող ենթակայան, մոնտաժվելու է մետաղական կոնստրուկցիայով և արտաքին տեղադրման ջերմանստեցվող ծայրային կցորդիչով նորից անցում կատարելու բաց հաղորդալարերի:

Մալուխն անցկացվելու է հողում, ավագե լցվածքով խրամուղու մեջ և պաշտպանվելու է ե/բ սալերով: Մալուխի անցկացման խորությունը 1 մ է:

Տարածքում իրականացվելու է 25 մ<sup>2</sup> (7 մ<sup>2</sup> պահեստ, +18մ<sup>2</sup>) մակերեսով օպերատորական շինություն՝ ներքին հարդարումով: Տեղադրվելու են անվտանգության համակարգերի արդյունքներին հետևելու համար հեռուստացույց, մոնիտոր՝ մոնիթորինգի արդյունքներին հետևելու համար:

Նախագծով նախատեսվում է արևային կայանի և ենթակայանի տարածքի ցանկապատում, արտաքին լուսավորության ցանցի և տեսանկարահանող սարքերի տեղադրում: Ցանկապատումը նախատեսվում է 2 մ բարձրությամբ մետաղական ցանկապատով:

Համաձայն հայտի՝ գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների





կառուցում չի նախատեսվում, օգտագործվելու է գործունեության ենթակա տարածք մուտեցնող՝ գոյություն ունեցող գրունտային ճանապարհը:

Համաձայն հայտի՝ Լեռնագոգի վարչական տարածքում տարբեր նախաձեռնողներ նախատեսում են իրականացնել արևակայանների կառուցում: Բոլոր նախատեսվող արևակայանները տեղակայված են հարակից տարածքներում, ուստի ընկերությունը նախատեսում է մեկ ընդհանուր 1000 քմ շինհրապարակի կազմակերպում՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով:

Արևակայանի և ենթակայանի կառուցման համար օգտագործվելու է բետոնանյութ, որը բերվելու է պատրաստի վիճակում՝ մասնագիտացված կազմակերպություններից՝ պայմանագրային հիմունքներով: Բետոնն օգտագործվելու է հիմնականում արևակայանում մետաղական կոնստրուկցիաների հիմքերի բետոնացման աշխատանքների, հենասյուների, ցանկապատի, լուսավորության վահանակների տեղադրման, պահակակետի, ենթակայանի կառուցման ժամանակ:

Տարածքում վառելիքի պահեստավորում չի նախատեսվում:

Շինարարության փուլում նախատեսվում է տարածքի 6 մուտք ու ելք, 3 շինտեխնիկայի կայանատեղի, 1 գրունտի կուտակման տարածք:

Արևային կայանի կառուցման ժամանակ կատարվելու են արևային վահանակները կրող կոնստրուկցիաների հիմքերի համար նախատեսված հորատանցքերի, հաստատուն հոսանքի մալուխների, փոփոխական հոսանքի մալուխների անցկացման խրամուղիների, հողանցման կոնտուրի, ենթակայանի տեղադրման, յուղահավաք հորի և ցանկապատման ու արտաքին լուսավորման հողային աշխատանքներ: Հաշվարկներն իրականացվել են ըստ նախագծային լուծումների, համաձայն որի հողի հանույթի ընդհանուր ծավալը կազմում է 1920 մ<sup>3</sup>, որից 1750 մ<sup>3</sup> կատարվելու է հետ լիցք, մնացած 170 մ<sup>3</sup> կիեռացվի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Կայանի տեղակայման աշխատանքները տևելու են 5 ամիս՝ ըստ ժամանակացույցի: Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկական և տրանսպորտային միջոցներ՝ 6 հորատող, 2 հարթեցնող, 1 ինքնաթափ, 2 ավտոաշտարակ, 2 էքսկավատոր, 1 աշտարակային կոունկ և այլն:

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող շարժական 6 հատ բիոզուգարանից՝ լվացարանով:

Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ՝ շինադրի և կենցաղային աղբի, օգտագործվող նյութերի մնացորդների, յուղոտված լաթերի տեսքով: Առաջանալու է մալուխների, հաղորդալարերի մնացորդներ՝ սև մետաղ 20 կգ, ալյումին՝ 6 կգ և պղինձ՝ 8 կգ, շինարարական նյութերի մնացորդներ, քանդման ընթացքում առաջացած շինարարական աղբ 135 մ<sup>3</sup> ծավալով, կենցաղային աղբ՝ 2400 կգ/տարի քանակով:

Արևային կայանի շահագործման ընթացքում հնարավոր վթարների կամ ենթակայանի հնարավոր վերանորոգման ժամանակ առաջանալու են վտանգավոր թափոններ՝ հալոգեններ, դեֆիլիներ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղեր՝ 17տ/տարի քանակով, ինչպես նաև յուղոտված լաթեր, ասֆալտ-բետոնե խառնուրդի մնացորդներ, յուղերով աղտոտված ավազ, սև մետաղի ջարդոն, որոնց քանակները ևս ներառված են հայտում: Վտանգավոր նյութերը և մետաղական թափոնները տրամադրվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին՝ դրանց հետագա վերամշակման և օգտագործման համար:

Հայտում նախատեսվել են թափոնների ազդեցության մեղմմանն ուղղված միջոցառումներ,



որոնց ճիշտ կառավարման արդյունքում վերջիններիս ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույն:

Համաձայն հայտի՝ շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կներառեն՝ օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների վտանգավոր նյութերի, այդ թվում տրանսպորտային միջոցներից և սարքավորումներից յուղերի հնարավոր ներթափանցման կանխարգելմանը, տարածքի կենսաբազմազանության պահպանման, ՀՀ Կարմիր գրքերում հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերմանն ու դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, մասնավորապես.

- օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարել գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան՝ ջրցան մեքենայով, չոր և շոգ եղանակներին,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավեցումը կատարվելու են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով,
- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ,
- շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա՝ հողային ռեսուրսները չաղտոտելու նպատակով,
- աշխատողների կենցաղային կարիքները հոգալու, ինչպես նաև հրդեհաշիջման նպատակով տեղադրվելու է 2 հատ 2 տոննա տարողությամբ ջրի բաք,
- շինհրապարակում տեղադրվելու է 3 տոննա տարողությամբ պլաստմասե տարա՝ հոսքաջրերի, անձրևաջրերի հավաքման և հեռացման նպատակով,
- ջրցանի և փոշենստեցման, մեքենաների անիվների լվացման համար օգտագործվելու է տեխնիկական որակի ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը,
- շինարարական տեխնիկայի և սարքավորումների լիցքավորումը, վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում,
- գործունեության ենթակա տարածքում, կենսաբազմազանության հայտնաբերման և դրանց պահպանման անհրաժեշտությունից ելնելով, նախատեսվում է մշակել գործողությունների պլան՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,
- ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ ընկերությունը նախօրոք առանձնացնելու է հատուկ պահպանման գոտի՝ վերջիններիս տեղափոխելու և վերատնկելու համար,
- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների ջերմային վնասազերծում կատարող կազմակերպություններին կամ



կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ խառնվելու և տեղափոխվելու են աղբավայր,

- հալոգեններ, դեֆիլիններ և տերֆենիլներ չպարունակող բանեցված տրանսֆորմատորային յուղերը հավաքվելու են համապատասխան տարաների մեջ և հանձնվելու են մասնագիտացված վերանշակող կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական աշխատանքներն իրականացնել միայն ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու, բնականոն վարքին չխանգարելու համար,
- արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ, որոնք կուտակվելու են տարածքում՝ փակ շենքում՝ վագոն տնակում, մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը,
- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Արևային կայանի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, օգտագործված, գոյություն ունեցող ճանապարհի կարգաբերում: Կատարվելու է փոսերի, հենասյուների եզրային մասերի լիցք՝ հողային զանգվածով:

Համաձայն հայտի՝ շահագործման ժամկետի ավարտից հետո, ընկերությունը հետագա շահագործման հնարավորությունների բացակայության պայմաններում, կատարելու է կայանի սարքավորումների ապամոնտաժում և տարածքի նախկին տեսքի բերում:

**Պատճառաբանական եզրահանգումներ.** Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման շրջանակներում իրականացվել են արևային կայանի կառուցման և շահագործման ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրություններ, որի հիման վրա գնահատվել են այն բոլոր ազդեցությունները, որոնք կառաջանան արևային կայանի շինարարության և շահագործման ընթացքում: Մշակվել են այդ ազդեցությունները կանխարգելող կամ մեղմող միջոցառումներ, ինչպես նաև այդ միջոցառումների արդյունավետության վերահսկման և մոնիթորինգի ծրագիր:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը զգալի չէ և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով, իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Արևային կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության գործընթացն իրականացվել է օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, պաշտպանության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Արմավիրի մարզպետարանը, Բաղրամյանի համայնքապետարանը, Լեռնագոգ բնակավայրը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել են հայտի լրամշակումներ և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները, մասնավորապես՝ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն հայցվող տարածքի (կադաստրային ծածկագիր 04-0450109-0161) հարևանությամբ մոտ 200 մ հեռավորության վրա առկա է 02-074-0230-0001 ծածկագրով հատուկ նշանակության հողամաս (Բաղրամյան ուսումնական կենտրոն): 2024թ. փետրվարի 29-ի ՊՆ/510-ԳՔ/2244 գրությամբ՝ պաշտպանության նախարարությունը ներկայացրել է կարծիք, որ չի առարկում 04-0450109-0161 կադաստրային ծածկագրով հողամասում իրականացանը:





Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի դպրոցի շենքում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

### **Փորձաքննական պահանջներ**

- Նախատեսվող գործունեության շինարարության և շահագործման ընթացքում, անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների /հողային ռեսուրսների, կենսաբազմազանություն և այլն/ մոնիթորինգ, կազմել հետևախազձային վերլուծության ծրագիր, ինչը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմիններին և հասարակայնությանը:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական, հրդեհանվտանգության և սանիտարական նորմերի պահպանմանը:

- Համաձայն ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ազգային գեոպորտալի՝ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման տարածքը համադրվում է հողամասերի հողային ֆոնդի շերտերի հետ, ինչը կարող է շերտերի որոշակի անճշտության արդյունք լինել, ուստի շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել համադրվող հատվածներում (8407260.7, 4456666.5, 8407272.25, 4456671.15, 8406441.36, 4457710.78) համապատասխան ճշտումներ կատարելուց հետո:

- Շինարարական աշխատանքների ընթացքում չխոչընդոտել հարակից հատուկ նշանակության հողատարածքներում գոյություն ունեցող ենթակառուցվածքների աշխատանքներին և զորավարժանքներին:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտն նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Արևային կայանի շահագործման ժամկետի ավարտից հետո հետագա գործունեությունն իրականացնել՝ համաձայն հայտում ամրագրված միջոցառումների:

- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում՝ առաջնորդվել ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի N781-Ն որոշման պահանջներով:

- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

### **ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ**

«Փաուեր էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի վարչական տարածքի 2/6 հողամասում «Փաուեր 2» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Արմինե Վարդանյան